

ՀՀ ԳԱԱ «ԱՅԿԵՆՄԱՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ԳԱԿ ՊՈԱԿ

Ստեփանյան Լալա Աշոտի

**Դեհիդրոտալանինի նոր մոդիֆկացված քիրալային Ni(II)  
կոմպլեքսների սինթեզը և դրանց հետազոտումը  $\beta$ -տեղակալված  
 $\alpha$ -ամինաթթուների կենսամիմետիկ ասիմետրիկ  
սինթեզի ռեակցիաներում**

Գ.00.14 - "Կենսատեխնոլոգիա" և  
Բ.00.10 - "Կենսորգանական քիմիա" մասնագիտություններով  
քիմիական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության

ՄԵՂՄԱԳԻՐ

Երևան – 2013

---

ИПЦ «АРМБИОТЕХНОЛОГИЯ» НАН РА ГНКО

Степанян Лала Ашотовна

**Синтез новых модифицированных хиральных Ni(II) комплексов  
дегидроаланина и их исследование в биомиметических  
асимметрических реакциях синтеза  $\beta$ -замещенных  $\alpha$ -  
аминокислот**

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени  
кандидата химических наук по специальностям  
03.00.14 – «Биотехнология» и 02.00.10 – «Биоорганическая химия»

Ереван – 2013

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պրոֆեսոր  
Ա. Ս. Սաղյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

քիմիական գիտությունների դոկտոր  
Ա.Ե. Աղաջանյան  
քիմիական գիտությունների դոկտոր  
Վ.Հ. Մնացականյան

Առաջատար կազմակերպություն՝

Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2013թ. հունիսի 19-ին, ժամը 14<sup>00</sup>– ին ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ում գործող ՀՀ ԲՈՂ-ի կենսատեխնոլոգիայի 018 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0056, ՀՀ, ք. Երևան, Գյուրջյան փողոց, 14, հեռ/ֆաքս (374 10) 65 41 83

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ գրադարանում:

Մեղմագիրն առաքված է 2013թ. մայիսի 18-ին:

Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար, կ.գ.թ.

Գ.Ե. Ավետիսովա

Тема диссертации утверждена на заседании ученого совета ННЦ «Армбиотехнология» НАН РА

Научный руководитель:

академик НАН РА, профессор  
А.С. Сагиян

Официальные оппоненты:

доктор химических наук  
А.Е. Агаджанян  
доктор химических наук  
В.А. Мнацаканян

Ведущая организация:

Ереванский государственный университет

Защита диссертации состоится «19» июня 2013г. в 14<sup>00</sup> часов на заседании специализированного совета 018 Биотехнологии ВАК РА при ННЦ «Армбиотехнология» НАН РА.

Адрес: 0056, РА, г. Ереван, ул. Гюрджяна, 14, тел/факс (374 10) 65 41 83

С диссертацией можно ознакомиться в библиотеке ННЦ «Армбиотехнология» НАН РА.

Автореферат разослан «18» мая 2013 г.

Ученый секретарь

специализированного совета, к.б.н.

Г.Е. Аветисова

## ԱՇՈՍԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

**Խնդրի արդիականությունը:** Ֆիզիոլոգիական ակտիվությամբ օժտված օպտիկապեն ակտիվ քիրալային միացությունների շարքում հատուկ տեղ են զբաղեցնում ամինաթթուները, որոնք լայն կիրառություն են ստացել բժշկագիտության, սննդարդյունաբերության, գյուղատնտեսության և այլ բնագավառներում: Վերջին տասնամյակներում հետազոտողների ուշադրությունը սևեռված է հատկապես ոչ սպիտակուցային  $\alpha$ -ամինաթթուների վրա, որոնք օժտված են ֆիզիոլոգիական ակտիվությամբ մեծ պաշարով և հանդիսանում են ժամանակակից հակաքաղցկեղային, հակավիրուսային, հակահիպերտենզիվային և այլ դեղապատրաստուկների կարևոր դեղաբանորեն ակտիվ բաղադրիչները ( Koike T., et al., 2000, Cativele, 1997; Couturier, 2004):

Ոչ սպիտակուցային ամինաթթուների կիրառման կարևորագույն ոլորտներից է Պոզիտրոնային Ըմիսիոնային Տոմոգրաֆիան (ՊԷՏ), որտեղ իզոտոպներով ( $^{11}\text{C}$ ,  $^{18}\text{F}$ ) նիշակրված նմանակների տեսքով դեղապատրաստուկները կիրառվում են մի շարք հիվանդությունների (ուռուցքային, սրտաբանական և այլն) արդյունավետ ակտորոշման գործընթացներում որպես ռադիոդեղապատրաստուկ (Fasth, 1990; Vries 1999; Hess, 2002):

Անհրաժեշտ է նշել, որ գրեթե բոլոր բնագավառներում ամինաթթուները պիտանի են կիրառության համար միայն օպտիկապեն մաքուր իզոմերների տեսքով: Մասնավորապես, հայտնի է, որ, դեղաբանորեն ակտիվ քիրալային պատրաստուկի օպտիկական անտիպոդը ցուցաբերում է բացասական դեղաբանական ազդեցություն (լավագույն դեպքում մնում է չեզոք), իսկ ՊԷՏ ակտորոշման բնագավառում նիշակրված ամինաթթվի օպտիկական անտիպոդի մինչև 5% պարունակությունը ռադիոդեղապատրաստուկում խանգարում է արդյունավետ ակտորոշմանը (Blaschke, 1980; Abellan, 2000): Իզոտոպների կիսատրոհման շրջանների կարճատևության պատճառով յսիստ կարևոր է նաև ռադիոդեղապատրաստուկի ստացման պրոցեսների արագընթացությունը:

Բնականաբար, նման կարգի քիրալային միացությունները պետք է սինթեզվեն հնարավորինս արագ և բարձր էնանտիոմերային (կամ դիաստերեոմերային) մաքրությամբ: Հետևաբար, առավել բարձր էնանտիոսելեկտիվությամբ և ամինաթթվային մնացորդի ռեակցիոնունակությամբ օժտված մոդիֆիկացված դեհիդրոամինաթթվային քիրալային կոմպլեքսների ստացումը և դրանց կիրառմամբ զանազան կառուցվածքի օպտիկապեն ակտիվ  $\beta$ -տեղակալված  $\alpha$ -ամինաթթուների բարձրսելեկտիվ և համեմատաբար արագընթաց կենսամիմետիկ ասիմետրիկ սինթեզի մեթոդների մշակումը արդիական և հրատապ խնդիր է:

**Հետազոտության նպատակն ու խնդիրները:** Սույն առենախտության նպատակն է նոր, արդյունավետ մոդիֆիկացված քիրալային դեհիդրոամինաթթվային կոմպլեքսների սինթեզը և, որպես ՊՖ-կախյալ ֆերմենտների մոդելային համակարգեր, դրանց միջոցով օպտիկապեն ակտիվ  $\beta$ -տեղակալված ( $S$ )- և ( $R$ )- $\alpha$ -ամինաթթուների՝ ներառյալ գրականության մեջ չնկարագրված նոր միացությունների, արագընթաց և բարձրսելեկտիվ կենսամիմետիկ ասիմետրիկ սինթեզի մեթոդների մշակումը:

Նշված նպատակների իրականացման համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները.

- Սինթեզվել և հետազոտել  $Ni^{II}$  իոնի նոր մոդիֆիկացված հարթ քառակուսային դեհիդրոտամինաթթվային կոմպլեքսներ, կազմված N-բենզիլպրոլինի մնացորդի ֆենիլային օդակի *որթո*-դիրքում F և Cl տեղակալիչներ պարունակող փրալային օժանդակ ռեագենտների և դեհիդրոտամինի Շիֆի հիմքերից՝  $Ni^{II}-(S)-2-CBPPB-\Delta-Ala$ ,  $Ni^{II}-(R)-2-CBPPB-\Delta-Ala$ ,  $Ni^{II}-(S)-2-FBPPB-\Delta-Ala$  և  $Ni^{II}-(R)-2-FBPPB-\Delta-Ala$ :
- Մոդիֆիկացված կոմպլեքսները հետազոտել դեհիդրոտամինաթթվային մնացորդի չհագեցած  $C=C$  կապին նուկլեոֆիլների միացման ասիմետրիկ ռեակցիաներում, մշակել  $\beta$ -տեղակալված (S)- և (R)- $\alpha$ -ամինաթթուների բարձրսելեկտիվ և համեմատաբար արագընթաց կենսամիմետիկ ասիմետրիկ սինթեզի մեթոդներ:
- Մշակել գրականության մեջ չնկարագրված  $\beta$ -դիրքում հետերոցիկլիկ պիպերազինային օդակ պարունակող (S)- և (R)- $\alpha$ -ալանինի նոր նմանակների ասիմետրիկ կենսամիմետիկ սինթեզի մեթոդներ:
- Վետազոտել սինթեզված որոշ ոչ սպիտակուցային ամինաթթուների ազդեցությունը մի շարք գրամ-դրական և գրամ-բացասական միկրոօրգանիզմների աճի վրա:

**Գիտական նորույթ:** Որպես պիրիդոքսալֆոսֆատ ֆերմենտների արդյունավետ մոդելային համակարգեր, առաջին անգամ, սինթեզվել և հետազոտվել են N-բենզիլպրոլինի մնացորդի ֆենիլային օդակի 2-րդ դիրքում ֆտոր և քլոր տեղակալիչներ պարունակող  $Ni^{II}$  իոնի նոր մոդիֆիկացված դեհիդրոտամինային կոմպլեքսներ՝  $Ni^{II}-(S)-2-CBPPB-\Delta-Ala$ ,  $Ni^{II}-(R)-2-CBPPB-\Delta-Ala$ ,  $Ni^{II}-(S)-2-FBPPB-\Delta-Ala$  և  $Ni^{II}-(R)-2-FBPPB-\Delta-Ala$ : Վերջիններս հետազոտվել են ինչպես հայտնի, այնպես էլ գրականության մեջ չնկարագրված  $\beta$ -տեղակալված  $\alpha$ -ամինաթթուների ասիմետրիկ սինթեզի ռեակցիաներում: Մշակվել են (S)- և (R)-բացարձակ կոնֆիգուրացիայով  $\beta$ -տեղակալված  $\alpha$ -ամինաթթուների բարձր-սելեկտիվ ( $ee > 97\%$ ) և համեմատաբար արագընթաց (10-30 րոպե) կենսամիմետիկ ասիմետրիկ սինթեզի մեթոդներ:

Մշակվել է պոտենցիալ հակավիրուսային ակտիվությամբ օժտված էնանտիոմերապես հարստացված գիլլիկ 2-կարբօքսիպիպերազինի սինթեզի մեթոդ:

**Աշխատանքի կիրառական նշանակությունը:** Մշակված մեթոդները ունիվերսալ են և հնարավորություն են ընձեռում համեմատաբար կարճ ժամանակահատվածում (10-30ր) միևնույն տեխնոլոգիական սխեմայով և նույն փրալային մոդիֆիկացված դեհիդրոտամինաթթվային սինտոնի կիրառմամբ սինթեզվել էնանտիոմերապես հարստացված ( $ee > 97\%$ ) (S)- և (R)-բացարձակ կոնֆիգուրացիայով զանազան ոչ սպիտակուցային  $\beta$ -տեղակալված  $\alpha$ -ամինաթթուներ:

Ծնորհիվ մոդիֆիկացված դեհիդրոտամինաթթվային կոմպլեքսներում առկա համեմատաբար բարձր էնանտիոսելեկտիվության և դեհիդրոտամինաթթվային մնացորդների բարձր ռեակցիոնունակության, մշակված մեթոդները կարող են կիրառվել ինչպես օպտիկապես ակտիվ ոչ սպիտակուցային ամինաթթուների պրեպարատիվ արտադրությունում, այնպես էլ ՊԷՏ-ռադիոդեպատրաստուկների ստացման գործընթացներում:

Բացի այդ, էնանտիոմերապես հարստացված ցիկլիկ 2-կարբօքսիպիպերագինի ստացման մշակված մեթոդը ապագայում կարող է կիրառություն գտնել հակավիրուսային դեղապատրաստուկների արտադրության գործընթացներում:

***Պաշտպանության ներկայացվող դրույթները:***

- ֆտոր և քլոր պարունակող մոդիֆիկացված դեհիդրոալանինային կոմպլեքսները՝ որպես պիրիդօքսալային ֆերմենտների առավել արդյունավետ մոդելային համակարգեր;
- (S)- և (R)-բացարձակ կոնֆիգուրացիայով β-ալիֆատիկ և արոմատիկ տեղակալված α-ամինաթթուների ստացման բարձրսելեկտիվ (*ee* >97%) և համեմատաբար արագընթաց ասիմետրիկ կենսասինտետիկ սինթեզի մեթոդներ (0,25 ժամ);
- պիպերագինային օդակ պարունակող (S)- և (R)-բացարձակ կոնֆիգուրացիայով β-տեղակալված ալանինի նոր ածանցյալների ասիմետրիկ կենսասինտետիկ սինթեզի մեթոդներ;
- գրականության մեջ չնկարագրված նոր ցիկլիկ 2-կարբօքսիպիպերագինի, N-Mesyլ և N-Tosyl պաշտպանված (S)-β-(N-էթանոլամին)ալանինների սինթեզի մեթոդներ;
- սինթեզված որոշ ամինաթթուների կենսաբանական հետազոտության արդյունքները:

***Աշխատանքի կապը գիտական ծրագրերի և թեմաների հետ:*** Աշխատանքն իրականացվել է Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի **A-1677**(2008-11թթ.) դրամաշնորհի, ինչպես նաև «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի բազային գիտահետազոտական ծրագրերի շրջանակներում:

***Հնդինակի անձնական ներդրումը:*** Հնդինակի անձնական ներդրումը ներառում է աշխատանքի հետ առնչվող գիտական գրականության վերլուծությունն ու ընդհանրացումը, հետազոտության հիմնական փորձարարական խնդիրների իրականացումն ու ամփոփումը, տպագրվող գիտական հոդվածների նախապատրաստումը և ատենախոսության կազմումը: Խնդրի դրվածքն ու արդյունքների քննարկումն իրականացվել է գիտական ղեկավար ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պրոֆեսոր Ա.Ս.Սադյանի ղեկավարությամբ:

***Աշխատանքի քննարկումը և տպագրությունները:*** Ատենախոսության նյութը շարադրված է 5 գիտական հոդվածների տեսքով, իսկ նրա առանձին արդյունքները զեկոլոյցի ձևով ներկայացվել են State-of the-Art Biotechnology in Armenia and ISTC contribution, Tsakhkadzor, 2008, «Успехи в области органической и фармацевтической химии» Ереван. 2012 միջազգային գիտաժողովներում:

***Աշխատանքի իրականացման վայրը:*** Աշխատանքն իրականացվել է ՀՀ Էկոնոմիկայի նախարարության «Կենսատեխնոլոգիայի ԳՀԻ» ՓԲԸ-ի (ներկայումս՝ ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ) «Ոչ սպիտակուցային ամինաթթուների սինթեզի» (ներկայումս՝ «Ասիմետրիկ սինթեզի») լաբորատորիայում:

***Աշխատանքի ծավալը և կառուցվածքը:*** Ատենախոսությունը կազմված է նախաբանից և չորս գլուխներից (գրական ակնարկ, խնդրի դրվածք և հետազոտման օբյեկտի ընտրություն, արդյունքների քննարկում, փորձնական մաս), եզրակացությունից և գրականության ցանկից: Աշխատանքը շարադրված է 138 էջի վրա, բերված են 8 սխեմա, 6 նկար և 7 աղյուսակ: Գրականության ցանկն ընդգրկում է 177 գիտական տպագիր հոդվածներ:

**ԳԼՈՒՆ 1. ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ.** Նվիրված է թեմայի հետ անմիջապես առնչվող ասիմետրիկ սինթեզի եղանակների ամփոփմանը: Նկարագրված են ոչ սպիտակուցային ամինաթթուների կիրառման ոլորտները, օրգանիզմում ՊՖ-կալյայ ֆերմենտների ազդեցությամբ ամինաթթուների մետաբոլիկ փոխարկումները և նրանց մոդելավորումը, ասիմետրիկ սինթեզի հիմնական օրինաչափությունները և ամինաթթուների ստացման կատալիտիկ ու ստեխիոմետրիկ ասիմետրիկ սինթեզի արդյունավետ մեթոդները:

**ԳԼՈՒՆ 2. ԽՆԴՐԻ ԴՐՎԱԾՔ ԵՎ ՀՆՏԱԳՈՏՄԱՆ ՕՔՅԵԿՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ.** Հնտագոտության հիմնական առարկա են հանդիսացել պիրիդօքսալֆոսֆատ (ՊՖ) ֆերմենտների արդյունավետ մոդելային համակարգերի ստացումը և հնտագոտումը (S)- և (R)-բացարձակ կոնֆիգուրացիայով β-դիքրոմ ալիֆատիկ, արոմատիկ և հետերոցիկլիկ տեղակալիչներ պարունակող α-ամինաթթուների, ինչպես նաև ցիկլիկ 2-կարբօսիպիպերազինի և նրա միջանկյալ արգասիքների՝ N-Mesyl և N-Tosyl պաշտպանված (S)-β-(N-էթանոլամին)ալանինի ասիմետրիկ սինթեզի ռեակցիաներում: Որպես ՊՖ-ֆերմենտների մոդելային համակարգեր ընտրվել են Ni<sup>II</sup> իոնի հետ դեհիդրալանինի և 2-N-(N'-բենզիլպրոլիլ)ամինոբենզոֆենոն (BPB) քիրալային օժանդակ ռեագենտի Շիֆի հիմքի առաջացրած հարթ-քառակուսային կոմպլեքսների մոդիֆիկացված նմանակները, որոնք N-բենզիլպրոլինի մնացորդի ֆենիլային օդակի 2-րդ դիրքում պարունակում են F և Cl տեղակալիչներ (2-CBPB և 2-FBPB):

**ԳԼՈՒՆ 3. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՄ.**


**3.1. Դեհիդրալանինի նոր մոդիֆիկացված կոմպլեքսների սինթեզը և կառուցվածքային հնտագոտությունը:**

Ատենախոսական աշխատանքի սույն գլուխը նվիրված է N-բենզիլպրոլինի մնացորդի ֆենիլային օդակի 2-րդ դիրքում էլեկտրոնաակցեպտոր F և Cl տեղակալիչներ պարունակող մոդիֆիկացված 2-CBPB և 2-FBPB քիրալային օժանդակ ռեագենտների և դեհիդրալանինի Շիֆի հիմքերի հետ Ni<sup>II</sup> իոնի առաջացրած նոր հարթ քառակուսային կոմպլեքսների սինթեզին ու կառուցվածքային հնտագոտություններին:

Մոդիֆիկացված Ni<sup>II</sup>-(S)-2-CBPB-Δ-Ala, Ni<sup>II</sup>-(R)-2-CBPB-Δ-Ala, Ni<sup>II</sup>-(S)-2-FBPB-Δ-Ala և Ni<sup>II</sup>-(R)-2-FBPB-Δ-Ala կոմպլեքսների սինթեզն իրականացվել է չմոդիֆիկացված կոմպլեքսների համար նախկինում մշակված մեթոդներով: Համեմատության համար աշխատանքում սինթեզվել է նաև չմոդիֆիկացված BPB քիրալային ռեագենտի հենքի վրա կառուցված դեհիդրալանինի հարթ քառակուսային կոմպլեքսը (7): (Մխմմա 1):

Նախ իրականացվում է (R)-սերինի կոմպլեքսի (1-3) Օ-ացետիլացում և ստացված Օ-ացետիլների հի կոմպլեքսի (4-6) դեացետոսիլացում: Ացետիլացման ռեակցիան իրականացվել է սենյակային ջերմաստիճանում, ացետոնիտրիլի միջավայրում, քաղցալաթթվի անհիդրիդի ներկայությամբ: Օ-ացետիլների կոմպլեքսներից քաղցալաթթվի մնացորդի α,β-էլիմինացման նպատակով ռեակցիոն խառնուրդի ջերմաստիճանը բարձրացվում է մինչև 50°C՝ ինտենսիվ խառնման պայմաններում, 1 ժամ տևողությամբ:

Սխեմա 1



X=H, Ni<sup>II</sup>-(S)-BPB-(R)-Ser (1), Ni<sup>II</sup>-(S)-BPB-(R)-OAcSer (4), Ni<sup>II</sup>-(S)-BPB-Δ-Ala (7), X=Cl, Ni<sup>II</sup>-(S)-2-CBPB-(R)-Ser (2), Ni<sup>II</sup>-(S)-2-CBPB-(R)-OAcSer(5), Ni<sup>II</sup>-(S)-2-CBPB-Δ-Ala(8), X=F, Ni<sup>II</sup>-(S)-2-FBPB-(R)-Ser (3), Ni<sup>II</sup>-(S)-2-FBPB-(R)-OAcSer (6), Ni<sup>II</sup>-(S)-2-FBPB-Δ-Ala (9):  
(1, 4 և 7-ը չմոդիֆիկացված կոմպլեքսներ):


Ընդ որում, Ni<sup>II</sup>-(S)-2-FBPB-(R)-O-AcSer (6) կոմպլեքսի առաջացումն ու դեագնոստիկացումը ընթանում է շատ ավելի արագ, քան Ni<sup>II</sup>-(S)-2-CBPB-(R)-O-AcSer (5) կոմպլեքսի դեպքում:

Ի տարբերություն դեհիդրատացիայի չմոդիֆիկացված կոմպլեքսի, մոդիֆիկացված կոմպլեքսների սինթեզի ժամանակ ելային սերինի կոմպլեքսների ացետիլացումը և դեագնոստիկացումը ընթանում է համեմատաբար ավելի հեշտ: Դեհիդրատացիայի մոդիֆիկացված կոմպլեքսները սկսում են առաջանալ նույնիսկ սենյակային ջերմաստիճանում, սակայն ամբողջական դեագնոստիկացման համար անհաժեշտ է ռեակցիոն խառնուրդը տաքացնել է մինչև 50°C (70°C-ի փոխարեն՝ չմոդիֆիկացված կոմպլեքսի դեպքում):

Նմանատիպ մեթոդով սինթեզվել են (R)-բացարձակ կոնֆիգուրացիայով Ni<sup>II</sup>-(R)-2-CBPB-Δ-Ala (10) և Ni<sup>II</sup>-(R)-2-FBPB-Δ-Ala (11) մոդիֆիկացված կոմպլեքսները՝ որպես ելայնությամբ օգտագործելով համապատասխանաբար Ni<sup>II</sup>-(R)-2-CBPB-(S)-Ser և Ni<sup>II</sup>-(R)-2-FBPB-(S)-Ser կոմպլեքսները:

Դեհիդրատացիայի նոր սինթեզված մոդիֆիկացված կոմպլեքսների (8, 9, 10, 11) քիմիական կառուցվածքն ու բացարձակ կոնֆիգուրացիան հետազոտվել և հաստատվել է ֆիզիկաքիմիական անալիզի ժամանակակից մեթոդներով:

Անհրաժեշտ է նշել, որ Ni<sup>II</sup> իոնի դեհիդրատայանինային կոմպլեքսների շարքում առաջին անգամ Ni<sup>II</sup>-(S)-2-CBPB-Δ-Ala (**8**) կոմպլեքսի համար հաջողվել է ստանալ լավ կազմավորված բյուրեղ և իրականացնել ռենտգենկառուցվածքային հետազոտություն: (Նկար 1):



**Նկար 1:** Մոդիֆիկացված Ni<sup>II</sup>-(S)-2-CBPB-Δ-Ala (**8**) կոմպլեքսի մոլեկուլային կառուցվածքը ըստ ռենտգենկառուցվածքային անալիզի տվյալների:

Ռենտգենկառուցվածքային անալիզի տվյալները միանշանակ հաստատում են կոմպլեքսի սպասվելիք կառուցվածքը և նրա պրոլինային մնացորդի (S)-բացարձակ կոնֆիգուրացիան:

### **3.2 Մոդիֆիկացված դեհիդրատայանինային կոմպլեքսների փորձարկումը նուկլեոֆիլային միացման ռեակցիաներում:**


Սինթեզված դեհիդրատայանինի մոդիֆիկացված կոմպլեքսները՝ որպես ՊՖ-կախյալ ֆերմենտների մոդելային համակարգեր, հետազոտվել են β-դիրքում ալիֆատիկ, արոմատիկ և հետերոցիկլիկ տեղակալված ոչ սպիտակուցային (S)- և (R)-α-ամինաթթուների կենսամիմետիկ ասիմետրիկ սինթեզի ռեակցիաներում: Համեմատության համար նախկինում մշակված մեթոդներով իրականացվել են նաև համապատասխան ալիֆատիկ և արոմատիկ տեղակալված (S)- և (R)-α-ամինաթթուների ասիմետրիկ սինթեզի ռեակցիաները չմոդիֆիկացված (S)-BPB և (R)-BPB քիրալային ռեագենտների նմանատիպ դեհիդրատայանինային կոմպլեքսների մասնակցությամբ:

#### **3.2.1. β-տեղակալված (S)-α-ալանինների արդյունավետ ասիմետրիկ սինթեզ:**

Հետազոտվել են դեհիդրատայանինի մոդիֆիկացված **8** և **9** կոմպլեքսների չհազնցած C=C կապին նուկլեոֆիլների ասիմետրիկ միացման ռեակցիաները: Որպես նուկլեոֆիլներ օգտագործվել են բենզիլամին, մեթիլամին, էթանոլամին, դիէթանոլամին, իզոպրոպիլամին, իմիդազոլ և մերկապտոէթանոլ: (Սխեմա 2):



## Սխմնա 2



Նուկլեոֆիլների միացման ռեակցիաները նախ տարվել են դեհիդրատացիոնի ստանդարտ չմոդիֆիկացված կոմպլեքսի (7) կիրառմամբ, այնուհետև, նույն ռեակցիաները իրականացվել են մոդիֆիկացված (8, 9) կոմպլեքսների մասնակցությամբ: Ռեակցիաներն իրականացվել են տարբեր պայմաններում՝ սենյակային ջերմաստիճանում և մինչև 50°C տաքացման պայմաններում, հիմքերի ներկայությամբ և առանց հիմքերի: Հետազոտությունները ցույց են տվել, որ գրեթե բոլոր հետազոտված նուկլեոֆիլային միացման ռեակցիաները համեմատաբար ավելի բարձր ելքերով և ստերեոսելեկտիվությամբ են ընթանում ագետոնիտրիլի միջավայրում K<sub>2</sub>CO<sub>3</sub>-ի առկայությամբ, տաքացման պայմաններում (աղյուսակ 1):

### Աղյուսակ 1.

Դեհիդրոլանինի մոդիֆիկացված և չմոդիֆիկացված կոմպլեքսների  
 $\text{CH}_3\text{CN}/\text{K}_2\text{CO}_3$  միջավայրում նուկլեոֆիլների ախմետրիկ միացման արդյունքները:

№ փ.	Ելային կոմպլեքս	Նուկլեոֆիլ	T, °C	Հարաբերություն, % <sup>***</sup>		Ժամա նակ, (րոպե)	Քիմ. նյւր <sup>****</sup> , %
				(S,S)	(S,R)		
1*	Ni <sup>II</sup> -(S)-2-FBPB-Δ-Ala(9)	C <sub>6</sub> H <sub>5</sub> CH <sub>2</sub> NH <sub>2</sub>	50	97.2(97.0)	2.8 (3.0)	12	89
2*	“-	C <sub>6</sub> H <sub>5</sub> CH <sub>2</sub> NH <sub>2</sub>	20	97.8(98.0)	2.2(2.0)	60	83
3	“-	C <sub>6</sub> H <sub>5</sub> CH <sub>2</sub> NH <sub>2</sub>	50	96.4(97.0)	3.65(3.0)	100	80
4	“-	C <sub>6</sub> H <sub>5</sub> CH <sub>2</sub> NH <sub>2</sub>	20	96.5(97.0)	3.5(3.0)	260	79
5	“-	C <sub>3</sub> H <sub>4</sub> N <sub>2</sub>	50	98.3(98.0)	1.7 (2.0)	90	75
6**	“-	C <sub>3</sub> H <sub>4</sub> N <sub>2</sub>	50	97.8(98.0)	2.2(2.0)	100	74
7**	“-	C <sub>3</sub> H <sub>4</sub> N <sub>2</sub>	20	97.9(98.0)	2.1(2.0)	200	75
8	“-	CH <sub>3</sub> NH <sub>2</sub> × HCl	20	97.5(98.0)	2.5(2.0)	210	84
9	“-	CH <sub>3</sub> NH <sub>2</sub> × HCl	50	97.1(97.0)	2.9(2.0)	90	85
10	“-	HOCH <sub>2</sub> CH <sub>2</sub> NH <sub>2</sub>	20	96.9(97.0)	3.1(3.0)	30	84
11	“-	HOCH <sub>2</sub> CH <sub>2</sub> NH <sub>2</sub>	50	97.6(98.0)	2.4(2.0)	20	85
12	“-	(HOCH <sub>2</sub> CH <sub>2</sub> ) <sub>2</sub> NH	20	97.3(97.0)	2.7(3.0)	120	83
13	“-	(HOCH <sub>2</sub> CH <sub>2</sub> ) <sub>2</sub> NH	50	97.8 (98)	2.2(2.0)	60	84
14	“-	(CH <sub>3</sub> ) <sub>2</sub> CHNH <sub>2</sub>	20	95.9(96.0)	4.1(4.0)	220	80
15	“-	(CH <sub>3</sub> ) <sub>2</sub> CHNH <sub>2</sub>	50	98.9(99.0)	1.1(1.0)	200	85
16	“-	HOCH <sub>2</sub> CH <sub>2</sub> SH	20	1.5(1.0)	98.5(99.0)	35	86
17	“-	HOCH <sub>2</sub> CH <sub>2</sub> SH	50	1.5	98.5	25	93
18*	Ni <sup>II</sup> -(S)-2-CBPB-Δ-Ala(8)	C <sub>6</sub> H <sub>5</sub> CH <sub>2</sub> NH <sub>2</sub>	50	97.0	3.0	15	80
19	“-	C <sub>6</sub> H <sub>5</sub> CH <sub>2</sub> NH <sub>2</sub>	50	96.1(97.0)	3.9(3.0)	120	78
20	“-	C <sub>3</sub> H <sub>4</sub> N <sub>2</sub>	50	94.6(95.0)	5.4(5.0)	110	66
21	“-	C <sub>3</sub> H <sub>4</sub> N <sub>2</sub>	20	94.1(94.0)	5.9(6.0)	250	63
22	“-	CH <sub>3</sub> NH <sub>2</sub> × HCl	50	96.81(97.5)	3.19(3.5)	90	92
23	“-	HOCH <sub>2</sub> CH <sub>2</sub> NH <sub>2</sub>	50	97.5(94.0)	2.5(6)	180	76
24	“-	(HOCH <sub>2</sub> CH <sub>2</sub> ) <sub>2</sub> NH	50	96	4	240	82
25	“-	(CH <sub>3</sub> ) <sub>2</sub> CHNH <sub>2</sub>	50	94.5	5.5	220	92
26	“-	HOCH <sub>2</sub> CH <sub>2</sub> SH	50	3.8 (1)	96.2(99)	180	72
27*	Ni <sup>II</sup> -(S)-BPB-Δ-Ala (7)	C <sub>6</sub> H <sub>5</sub> CH <sub>2</sub> NH <sub>2</sub>	50	93	7	240	75
28	“-	C <sub>3</sub> H <sub>4</sub> N <sub>2</sub>	50	94	6	300	85
29	“-	CH <sub>3</sub> NH <sub>2</sub> × HCl	50	94	6	50ժամ	81
30	“-	HOCH <sub>2</sub> CH <sub>2</sub> NH <sub>2</sub>	50	90	10	50ժամ	85
31	“-	(HOCH <sub>2</sub> CH <sub>2</sub> ) <sub>2</sub> NH	50	94	6	50ժամ	78

\*- բենզիլամինի միացումն իրականացվել է  $\text{CH}_3\text{CN}/\text{NaOH}$  միջավայրում (փ.1, 2, 18 և 27); \*\* - միացումն իրականացվել է առանց պոտաշի, \*\*\* – դիաստերեոմերների հարաբերությունը ըստ քիրալային ԲԱՏՔ անալիզի տվյալների (փակագծերում բերված են <sup>1</sup>H ՄՄՌ անալիզի տվյալները), \*\*\*\* – նուկլեոֆիլների միացման փուլում դիաստերեոմեր կոմպլեքսների խառնուրդի քիմիական ելքը:

Նուկլեոֆիլային միացման ռեակցիաների ընթացքին հարմար է հետևել ՆՇՔ-ի մեթոդով [SiO<sub>2</sub>, CHCl<sub>3</sub>:CH<sub>3</sub>COCH<sub>3</sub> (3:1)], ըստ ելային դեհիդրոարալանինային կոմպլեքսի հետքերի անհետացման և միացման արգասիք կոմպլեքսների դիաստերեոիզոմերների միջև թերմոդինամիկական հավասարակշռության հաստատման:

Նուկլեոֆիլների միացման արդյունքում առաջանում են (S,S)- և (S,R)- դիաստերեոմեր կոմպլեքսների խառնուրդներ՝ (S,S)-դիաստերեոիզոմերների մեծ ավելցուկով, բացառությամբ **21**, **22** և **23** կոմպլեքսների, որոնց դեպքում ավելցուկով են առաջանում (S,R)- դիաստերեոիզոմերները (համաձայն Լյան-Ինգոլդ-Պրելոնգի կանոնի): Ընդ որում, ասիմետրիկ միացման ռեակցիաների ստերեոսելեկտիվությունը գլխավորապես հսկվում է թերմոդինամիկական գործոններով և մոդիֆիկացված կոմպլեքսներում դիաստերեոմերների միջև թերմոդինամիկական հավասարակշռությունը ստեղծվում է համեմատաբար ավելի արագ:

Այդուսակում բերված տվյալներից հետևում է, որ դեհիդրոարալանինի ստանդարտ **7** կոմպլեքսից (փ. 27-31) մոդիֆիկացված Ni<sup>II</sup>-(S)-2-CBPB-Δ-Ala (**8**) (փ. 18-27) և Ni<sup>II</sup>-(S)-2-FBPB-Δ-Ala (**9**) (փ. 1-18) կոմպլեքսներին անցնելիս նկատվում է սինթետիկ ստերեոսելեկտիվության աճ և նուկլեոֆիլ միացման ասիմետրիկ ռեակցիաների տևողության կտրուկ կրճատում: Այսպես, չմոդիֆիկացված կոմպլեքսի դեպքում սինթետիկ ստերեոսելեկտիվությունը միջինացված տվյալներով կազմում է 84-90%, իսկ միացման ռեակցիաների տևողությունը մոտ 5-50 ժամ, իսկ մոդիֆիկացված կոմպլեքսների կիրառման ժամանակ սինթետիկ ստերեոսելեկտիվությունը աճում է մինչև 96-98%, իսկ ռեակցիաների տևողությունը կրճատվում է մինչև 0,25 ժամ:

Ռենտգենկառուցվածքային անալիզի տվյալների հիման վրա կարելի է ենթադրել, որ մոդիֆիկացված կոմպլեքսներում առկա գերբարձր էնանտիոսելեկտիվությունը և դեհիդրոարալանինաթթվային մնացորդի C=C կապի բարձր էլեկտրոֆիլությունը պայմանավորված են N-բենզիլարոլինի մնացորդի ֆենիլային օղակ ներմուծած էլեկտրոնասկզբատոր տեղակալիչի ազդեցությամբ կոմպլեքսի մակրոկառուցվածքում հարուցված կոնֆորմացիոն փոփոխություններով. (ինչպես դա բացատրվել էր նախկինում նմանատիպ մոդիֆիկացված ամինաթթվային կոմպլեքսների C-ալկիլման ռեակցիաներում):


Նուկլեոֆիլային միացման արգասիք կոմպլեքսների՝ (S,S)- և (S,R)- դիաստերեոիզոմերների հարաբերությունը որոշվել է անմիջապես դիաստերեոմերային խառնուրդից (մինչև քրոմատոգրաֆացվելը) անջատված ամինաթթվային մնացորդի բիրտային ԲՄՏՔ կամ ԳՏՔ անալիզի եղանակով: Լրացուցիչ ասիմետրիկ միացման ռեակցիաների դիաստերեոսելեկտիվությունը որոշվել է նաև <sup>1</sup>H-ՄՄՌ եղանակով դիաստերեոմեր կոմպլեքսների խառնուրդի անալիզով: Արդյունքները բերված են աղյուսակ 1-ում:

**3.2.2 β-տեղակայված (R)-α-ամինաթթուների ասիմետրիկ սինթեզ:** Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այսօր դեղագործության բնագավառում մեծ կարևորություն են ներկայացնում ոչ սպիտակուցային (R)-α-ամինաթթուները, ատենալստասկան աշխատանքի սույն բաժնում հետազոտվել են (R)-պրոլինի հենքի վրա կառուցված մոդիֆիկացված դեհիդրոարալանինային կոմպլեքսներին նուկլեոֆիլների ասիմետրիկ միացման ռեակցիաները, նպատակ ունենալով իրականացնել β-դիրքում ալիֆատիկ

և արումատիկ տեղակալված (*R*)-բացարձակ կոնֆիգուրացիայով  $\alpha$ -ամինաթթուների արդյունավետ ասիմետրիկ սինթեզներ:

Հիմք ընդունելով (*S*)-բացարձակ կոնֆիգուրացիայով մոդիֆիկացված քիրալային օժանդակ ռեագենտների դեհիդրոպալանինային կոմպլեքսների հետազոտման ժամանակ արձանագրված արդյունքները, (տես բաժին 3.2.1-ը), սույն բաժնում  $\beta$ -տեղակալված (*R*)- $\alpha$ -ամինաթթուների ասիմետրիկ սինթեզի համար օգտագործվել են մոդիֆիկացված (*R*)-2-CBPB և (*R*)-2-FBPB քիրալային օժանդակ ռեագենտների և դեհիդրոպալանինի Շիֆի հիմքերի հետ Ni<sup>II</sup> իոնի առաջացրած հարթ-քառակուսային կոմպլեքսները (**10**, **11**): Որպես նուկլեոֆիլ ազնեաններ հետազոտվել են ալիֆատիկ ամիններ, բենզիլամին, իմիդազոլ և մերկապտոէթանոլ: Նուկլեոֆիլ միացման ռեակցիաներն իրականացվել են CH<sub>3</sub>CN/K<sub>2</sub>CO<sub>3</sub> միջավայրում 50°C տաքացման պայմաններում: (Սխեմա 3):

### Սխեմա 3



Նուկլեոֆիլ միացման ռեակցիաների ստերեոսելեկտիվությունը (*ee*) գնահատվել է քիրալային ԲԱՀԶ անալիզի մեթոդներով, ինչպես դա արվել էր (*S*)-2-FBPB և (*S*)-2-CBPB քիրալային ռեագենտների դեհիդրոպալանինային կոմպլեքսների կիրառման դեպքում: Արդյունքները բերված են աղյուսակ 2-ում: Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, բոլոր փորձերում էլ արձանագրվել են բարձր ստերեոսելեկտիվություն և միացման ռեակցիաների համեմատական կարճա-

տևություն: Միջինացված տվյալներով (*R,R*)- դիաստերեոմերների էնանտիոմերային ավելցուկը ասիմետրիկ միացման ռեակցիաներում գերազանցում է 96%-ը:

**Աղյուսակ 2.**

Ni<sup>II</sup>-(*R*)-2-FBPPB-Δ-Ala (11) և Ni<sup>II</sup>-(*R*)-2-CBPPB-Δ-Ala (10) կոմպլեքսների և նուկլեոֆիլների միացման արդյունքները (CH<sub>3</sub>CN/K<sub>2</sub>CO<sub>3</sub>, 50°C)

№	Դեհիդրալանիկ կոմպլեքս	Նուկլեոֆիլ ռեագենտ	Ժամանակ (րոպե)***	( <i>R,R</i> )/( <i>R,S</i> ) (%)*	Ելք (%)**
1	Ni <sup>II</sup> -( <i>R</i> )-2-FBPPB-Δ-Ala (11)	CH <sub>3</sub> NH <sub>2</sub> × HCl	90	97.1/2.9	78
2	-.-	HOCH <sub>2</sub> CH <sub>2</sub> NH <sub>2</sub>	20	97.3/ 2.7	81
3	-.-	(HOCH <sub>2</sub> CH <sub>2</sub> ) <sub>2</sub> NH	60	97.5/2.5	79
4	-.-	(CH <sub>3</sub> ) <sub>2</sub> CHNH <sub>2</sub>	200	98.6/ 1.4	83
5	-.-	HOCH <sub>2</sub> CH <sub>2</sub> SH	25	3.2/96.8	90
6	-.-	C <sub>6</sub> H <sub>5</sub> CH <sub>2</sub> NH <sub>2</sub>	100	96.4 /3.64	82
7	-.-	C <sub>3</sub> H <sub>4</sub> N <sub>2</sub>	90	98.1 /1.9	70
8	Ni <sup>II</sup> -( <i>R</i> )-2-CBPPB-Δ-Ala(10)	CH <sub>3</sub> NH <sub>2</sub> × HCl	90	96.6/3.4	86
9	-.-	HOCH <sub>2</sub> CH <sub>2</sub> NH <sub>2</sub>	180	95.2/4.8	72
10	-.-	(HOCH <sub>2</sub> CH <sub>2</sub> ) <sub>2</sub> NH	240	96.1/3.9	80
11	-.-	(CH <sub>3</sub> ) <sub>2</sub> CHNH <sub>2</sub>	220	94/6	90
12	-.-	HOCH <sub>2</sub> CH <sub>2</sub> SH	180	5/95	73
13	-.-	C <sub>6</sub> H <sub>5</sub> CH <sub>2</sub> NH <sub>2</sub>	120	95.9/4.1	80
14	-.-	C <sub>3</sub> H <sub>4</sub> N <sub>2</sub>	110	94/6	65

\* Քիրալային ԲԱԶԲ անալիզի տվյալները;

\*\* Ընդհանուր քիմիական ելքը նուկլեոֆիլների միացման փուլում;

\*\*\* Ռեակցիաներն իրականացվել են նույն պայմաններում, ինչ պայմաններում իրականացվել են Ni<sup>II</sup>-(*S*)-2-CBPPB-Δ-Ala (8) և Ni<sup>II</sup>-(*S*)-2-FBPPB-Δ-Ala (9) կոմպլեքսների նուկլեոֆիլ միացման ռեակցիաները:


Նուկլեոֆիլ միացման հիմնական արգասիք (*R,R*)-դիաստերեոիզոմեր կոմպլեքսները (40-53) անջատվել են խառնուրդից պրեպարատիվ քրոմատոգրաֆիայի մեթոդով [SiO<sub>2</sub>, 20x20սմ, CHCl<sub>3</sub>-CH<sub>3</sub>COCH<sub>3</sub> (3:1)] և հետագոտվել ու հաստատվել է նրանց կառուցվածքն ու բացարձակ կոնֆիգուրացիան ժամանակակից ֆիզիկաքիմիական անալիզի մեթոդներով: Առաջացած (*R,R*)-բացարձակ կոնֆիգուրացիայով հիմնական դիաստերեոմեր կոմպլեքսների աղաթթվային քայքայման հիդրոլիզատից անջատվել են էնանտիոմերապես հարստացված (*R*)-β-տեղակալված α-ամինաթթուներ (54-60): Արդյունքում սինթեզվել են 7 ոչ սպիտակուցային (*R*)-ամինաթթու:

**3.3 Դեհիդրալանիկ մոդիֆիկացված կոմպլեքսների հետազոտումը հետերոցիկլիկ նուկլեոֆիլների ասիմետրիկ միացման ռեակցիաներում**

**3.3.1. β-դիրքում պիպերազինային օդակ պարունակող (*S*)-α-ալանինի նոր ածաղայների կենսամիմետիկ ասիմետրիկ սինթեզը:** Այսօր բժշկական պրակտիկայում լայնորեն կիրառվում են պիպերազինային ֆրագմենտ պարունակող պատրաստուկներ և դրանց նոր, առավել աղյուսակվտ նմանակների ստացման և հետազոտական աշխատանքները հաջողությամբ շարունակվում են:

Սույն աշխատանքում հետազոտվել է պիպերազինային օդակ պարունակող հետերոցիկլիկ նուկլեոֆիլների ասիմետրիկ միացման ռեակցիաները  $Ni^{II}$  իոնի մոդիֆիկացված և չմոդիֆիկացված քիրալային դեհիդրոալանինային կոմպլեքսներին, ինչի արդյունքում սինթեզվել են գրականության մեջ չնկարագրված, նոր ոչ սպիտակուցային օպտիկապես ակտիվ  $\alpha$ -ամինաթթուներ: (Սխեմա 4):

Սխեմա 4



Հետերոցիկլիկ նուկլեոֆիլների սելեկտիվ միացումը դեհիդրոալանինի քիրալային կոմպլեքսներին՝ (7-9) իրականացվել է ագետոնիտրիլի միջավայրում՝ ինչպես  $K_2CO_3$  ներկայությամբ, այնպես էլ առանց հիմքի: (Սխեմա 4): Պարզվել է, որ միացման ռեակցիաները հատկապես բարձր դիաստերեոսելեկտիվությամբ են ընթանում  $CH_3CN$ -ի միջավայրում հիմնային կատալիզի և նուկլեոֆիլ/հիմք=1/1.5 հարաբերության պայմաններում:

Որպես հետերոցիկլիկ նուկլեոֆիլներ օգտագործվել են բենզիլպիպերազին, 4-բրոմբենզիլպիպերազին, 2-ֆտորբենզիլպիպերազին, 3,5-դիմեթիլբենզիլպիպերազին, դիֆենիլմեթիլպիպերազին և ալիլպիպերազին:

Միացման ռեակցիայի ընթացքին հարմար է հետևել ՆՇԸ-ով  $[SiO_2, 20 \times 20 \text{ սմ}, CHCl_3-CH_3COCH_3 (5:1)]$ :

Դեհիդրոալանինի կոմպլեքսներին (7, 8 և 9) նուկլեոֆիլների միացման

արդյունքում առաջանում են նոր ինդուցված քիրալային կենտրոնի տարբեր կոնֆիգուրացիաներով [(S,S) և (S,R)] դիաստերեոմեր կոմպլեքսների խառնուրդներ՝ (S,S) դիաստերեոիզոմերի գերակայությամբ (61-78):

Այստեղ ևս չնդիֆիկացված 7 կոմպլեքսից մոդիֆիկացված 8 և 9 կոմպլեքսներին անցնելիս նկատվում է նուկլեոֆիլային միացման արդյունքում առաջացած դիաստերեոիզոմերների հարաբերության [(S,S)/(S,R)] աճ և ասիմետրիկ ռեակցիաների տևողության կրճատում:

Միացման արդյունքում առաջացած հիմնական դիաստերեոիզոմեր կոմպլեքսների (61-78) նմուշները մաքրվել են խառնուրդից վերաբյուրեղացմամբ կամ պրեկարատիվ քրոմատոգրաֆիայի մեթոդով [SiO<sub>2</sub>, 20x20սմ, CHCl<sub>3</sub>-CH<sub>2</sub>COCH<sub>3</sub> (5:1)] և հետազոտվել ու հաստատվել է նրանց կառուցվածքն ու բացարձակ կոնֆիգուրացիան ֆիզիկաքիմիական անալիզի ժամանակակից մեթոդներով: Արդյունքները բերված են աղյուսակ 3- ում և 4-ում:

### Աղյուսակ 3.

Դեհիդրոլանինի կոմպլեքսներին հետերոցիկլիկ նուկլեոֆիլների առանց հիմքի միացման արդյունքները (CH<sub>3</sub>CN, 20°C-ում):

№	Դեհիդրոլանինի կոմպլեքս	Նուկլեոֆիլ	(S,S)/(S,R) (%)*	Ժամ., (րոպե)	Ելք (%)**
1	Ni <sup>II</sup> -(S)-BPB-Δ-Ala	4-բրոմբենզիլպիպերազին	84.76/15.24	35	78
2	“-	2-ֆտորբենզիլպիպերազին	86.15/13.85	40	85
3	“-	բենզիլպիպերազին	85.58/14.42	25	75
4***	“-	ալիլպիպերազին	78.12/21.88	38	60
5***	“-	3,5-դիմեթիլբենզիլպիպերազին	79.12/20.88	540****	65
6***	“-	դիֆենիլմեթիլպիպերազին	79.13/20.87	420****	62
7	Ni <sup>II</sup> -(S)-2-FBPB-Δ-Ala	4-բրոմբենզիլպիպերազին	95.93/4.07	15	90
8	“-	2-ֆտորբենզիլպիպերազին	95.18/4.82	12	87
9	“-	բենզիլպիպերազին	95.5/4.5	10	95
10***	“-	ալիլպիպերազին	93.4/6.6	25	78
11***	“-	3,5-դիմեթիլբենզիլպիպերազին	94.9/5.1	340****	82
12***	“-	դիֆենիլմեթիլպիպերազին	95.2/4.8	230****	75
13	Ni <sup>II</sup> -(S)-2-CBPB-Δ-Ala	4-բրոմբենզիլպիպերազին	95.9/4.1	20	87
14	“-	2-ֆտորբենզիլպիպերազին	95.3/4.7	18	83
15	“-	բենզիլպիպերազին	94.5/5.5	15	90
16***	“-	ալիլպիպերազին	92.9/7.1	30	75
17***	“-	3,5-դիմեթիլբենզիլպիպերազին	94.7/5.3	380****	77
18***	“-	դիֆենիլմեթիլպիպերազին	94.7/5.3	280****	70

#### Աղյուսակ 4.

Դեհիդրոալանինի կոմպլեքսներին հետերոցիկլիկ նուկլեոֆիլների միացման արդյունքները  $K_2CO_3$ -ի ներկայությամբ ( $CH_3CN$ ,  $20^\circ C$ -ում):

№	Դեհիդրոալանինի կոմպլեքս	Նուկլեոֆիլ	(S,S)/(S,R) (%) <sup>*</sup>	Ժամ., (րոպե)	Ելք (%) <sup>**</sup>
1	<b>Ni<sup>II</sup>-(S)-BPB-Δ-Ala</b>	4-բրոմբենզիլալիպերազին	87.1/12.9	30	80
2	–“–	2-ֆտորբենզիլալիպերազին	91.9/8.1	35	85
3	–“–	բենզիլալիպերազին	90.5/9.5	20	75
4 <sup>***</sup>	–“–	ալիլալիպերազին	79.85/20.15	35	60
5 <sup>***</sup>	–“–	3,5-դիմեթիլբենզիլալիպերազին	81.52/18.48	480 <sup>****</sup>	70
6 <sup>***</sup>	–“–	դիֆենիլմեթիլալիպերազին	83.13/16.87	300 <sup>****</sup>	73
7	<b>Ni<sup>II</sup>-(S)-2-FBPP-Δ-Ala</b>	4-բրոմբենզիլալիպերազին	96.38/3.62	15	93
